ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«01» «02» 2019թ.**
ժ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արմեն Զոհրաբյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Յուրա Մուշեղյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,Վալեր Հոդաբաշլան/ԲԱ/,Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ
Արմեն Զոհրաբյան

1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ի հետ:
2. Ներկայացված գնային առաջարկի և բանակցությունների արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:
4. Տեղեկատվություն հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ի հետ

Քանի որ մասնակցի գնային առաջարկը գերազանցում էր տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման հայտով սահմանված նախահաշվային արժեքը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեցել էր.

Հիմք ընդունել ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթները՝ 2019 թվականին փետրվարի 1-ին, ժամը 11-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքի, N 205 աշխատասենյակում՝ գների նվազեցման շուրջ կազմակերպել բանակցություններ, որին ներկա էր <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ն, արդյունքում մասնակիցը նվազագույն գին առաջարկեց՝ 1419167(մեկ միլիոն չորս հարյուր տասնինը հազար հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 283833(երկու հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ, ընդամենը՝ 1703000(մեկ միլիոն յոթ հարյուր երեք հազար) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Ներկայացրած գնային առաջարկի և բանակցության արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշման ընդունում

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա՝ <<Մ-Բի-Ռ>>-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 205 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ _____ Յու. Մուշեղյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան